ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 1-ին, երկուշաբթի.—Այսօր Ծննից Մայր Աթոռ ժամանեց, որպես ուխտավոր, տ. Օշին վրդ. Նիկոլյանը:

*
* *

Փետրվարի 6-ին, շաբաթ.—Այսօր Դամասկոսից ս. Էջմիածին ուխտի եկավ Մայր Աթոռի միաբան տ. Տարոն վրդ. Ճերեճյանը:

*
* *

Փետրվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը, իսկ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը քարոզում է «Հայր մեր»-ից առաջ «Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ և հաւատարիմ սուրբ Սարգիս» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 11-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի ուղեկցությամբ, այցելում է ս. Գեղարդի վանքը՝ հանգամանորեն ծանոթանալու տեղում կատարված վերանորոգչական և շինարարական աշխատանքներին:

*
* *

Փետրվարի 13-ին, շաբաթ.—Այսօր երեկոյան Մայր տաճարում մեծ շուքով կատարվում է Տյառնընդառաջի նախատոնակը:

Արարողության ավարտին, ժամը 19.30-ին, հոգևոր ճեմարանի մարզադաշտում Վեհափառ Հայրապետը վառում է Տյառնընդառաջի ավանդական խարույկը, որի շուրջ խմբված էին ս. Էջմիածնի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները, ուսանողությունը:

Խարույկահանդեսից հետո Վեհափառ Հայրապետը, միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները և ուսանողները միասին են ընթրում ճեմարանի սեղանատունը: Ընթրիքի ժամանակ խոսում է Վեհափառ Հայրապետը օրվա տոնի հոգևոր-բարոյական նշանակության մասին: Ելույթներ են ունենում նաև Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, տ. Տարոն վարդապետը, հոգևոր ճեմարանի դասախոս Խորեն Մեյխանեջյանը, այնուհետև Դավիթ սրկ. Դիլանյանը և Կտրիճ սրկ. Ներսիսյանը: Տյառնընդառաջի ընթրիքը ավարտվում է ուրախ մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

*
* *

Փետրվարի 14-ին, կիրակի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Օշին վրդ. Նիկոլյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հաւատք քո կեցուցին զքեզ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 16-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղևոնդեանց քահանայից.

Այսօր Մայր տաճարում, ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

* * *

Փետրվարի 21-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Տարոն վրդ. Ճերեճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ» բնաբանով: Վեհափառ Հայրապետը Իր բովանդակալից քարոզում խոսում է Մեծ պահոց հոգևոր նշանակության, մարդկային բնության մեղանչականության և Քրիստոսով կատարված փրկագործության մեծ խորհրդի մասին:

* * *

Փետրվարի 23-ին, հինգշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ տ. Հարությունվրդ. Պզտիկյանը: Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո հայր Հարությունը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ Նրան մատուցելու աբբահայր Պողոս վրդ. Անանյանի և ողջ Մխիթարյան միաբանության ողջույններն ու որդիական հարգանքները:

* * *

Փետրվարի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում սկսվում է «Կարգ ապաշխարութեան» և «Արևագալի» ժամերգությունը: Հոգևոր ճեմարանի ուսանողները կատարում են «Արևագալի» երգերը:

«Արևագալի» հանդիսավոր ժամերգությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 26-ին, ուրբաթ.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է խաղաղական ժամերգություն, որին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը և ողջ միաբանությունը:

* * *

Փետրվարի 28-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Տարոն վրդ. Ճերեճյանը՝ «Եղերուք կատարեալ ինչպէս երկնաւոր Հայր ձեր կատարեալ է» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ